

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020



ՀԱՍԼԵՏ ՄԱՐՏԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Մարտիկի Գևորգյանը ծնվել է 1951 թ. մարտի 1-ին: 1958-1968 թթ. ուսանել է Ապարանի շրջանի Մելիք գյուղի միջնակարգ դպրոցում: 1970-1972 թթ. ծառայել է խորհրդային բանակում, իսկ 1972-1974 թթ. աշխատել է Աշտարակում՝ որպես բանվոր: 1979 թ. ԵՊՀ ռազմագիտության ամբիոնում ստացել է լեյտենանտի կոչում, ապա եղել է պահեստազորի ավագ լեյտենանտ: 1974-1979 թթ. ուսանել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում՝ ստանալով փիլիսոփայի որակավորում: 1979-1982 թթ. աշխատել է Նաիրիի շրջանի թիվ 5 երեկոյան դպրոցում՝ որպես ուսմասվար: 1982-1991 թթ. ուսուցիչների կատարելագործման հանրապետական ինստիտուտի հասարակագիտության ամբիոնում աշխատել է որպես ավագ գիտաշխատող: Չուզահեռաբար հայոց պատմություն է դասավանդել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում և Վալերի Բոյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտում:

1996 թ. Հ. Գևորգյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Դրաստամատ Կանայանի գործունեությունը» թեմայով և արժանացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի: 2010 թ. նա արդեն «Հ.Յ.Դ. գործունեությունը Արևմտյան Հայաստանում» թեմայով պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ ստանալով պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2002-2011 թթ. աշխատել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի պատմության և քաղաքագիտության ամբիոնում: 2011 թվականից ամբիոնի պրոֆեսոր էր:

2008 թվականից աշխատել է ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» ռազմական թանգարանում՝ որպես գիտության գծով փոխտնօրեն:

Հայաստանի քաղաքական անկախությանը նախորդող շրջանում նա սկսեց 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ ազգային-ազատագրական պայքարին նվիրված հրապարակումներով հանդես գալ «Գարուն» ամսագրում: Այդ հրապարակումները ջերմ ընդունելություն գտան ընթերցողների շրջանում, խորհրդային շրջանի երկարատև մոռացությունից հետո վերհիշվում ու վերարժևորվում էին հայ ֆիդայիները, ազգային-պետական գործիչները: ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» ռազմական թանգարանում աշխատելու տարիներին պրոֆեսոր Գևորգյանը Արցախյան ազատամարտին նվիրված հոդվածաշարով հանդես է եկել ՀՀ ՊՆ «Հայ զինվոր» պաշտոնաթերթում՝ ներկայացնելով Արցախյան ազատամարտի հերոսական դրվագները:

Հատկապես ուշագրավ են Հ. Գևորգյանի՝ մեծանուն հայորդիներին նվիրված ուսումնասիրությունները: Արխիվային նորահայտ և հարուստ նյութերով, որոնց մեծ մասը բերվել էր Հ.Յ.Դ. Բոստոնի կենտրոնական արխիվից, Հ. Գևորգյանը ձեռնարկեց հայոց ազգային ազատագրական պայքարի երկու հսկաների՝ Նիկոլ Դումանի և Դրաստամատ Կանայանի գործունեության ուսումնասիրությանը՝ ներկայացնելով նրանց հերոսական կերպարները,

հայրենասիրական ոգու պոռթկումները, դերն ու նշանակությունը հայոց պատմության նորագույն ժամանակաշրջանում: Ավելին, պետք է նշել, որ հայրենասեր պատմաբանը Դրոյի մասին 1991 թ. հրապարակումից հետո շարունակեց պեղել հնարավոր բոլոր աղբյուրներն ու արխիվները՝ վերհանելով մեծ հերոսի կյանքի և գործունեության հետ կապված նոր փաստեր և իրադարձություններ: Պատահական չէ, որ նրա «Դրո» գիրքը մի քանի անգամ վերահրատարակվեց: Օրինաչափ է, որ Զ. Գևորգյանը նախաձեռնեց Դրոյի աճյունը հայրենիք տեղափոխելու գործը, մաս կազմեց այդ նպատակով ստեղծված ՀՀ պաշտոնական պատվիրակության, և արդյունքում հերոսի աճյունը բերվեց հայրենիք ու ամփոփվեց Ապարանի հուշահամալիրում:

Պատմաբանի մյուս հիմնարար աշխատությունը նվիրված է ազգային-ազատագրական պայքարի նշանավոր գործիչ Նիկողայոս Տեր-Հովհաննիսյանի (Նիկոլ Դուման) գործունեության համակողմանի լուսաբանմանը: Հայրենական պատմագրության մեջ առաջին անգամ, արխիվային նորահայտ վավերագրերի և հուշագրությունների հիմքով ներկայացվում է Նիկոլ Դուման ազգային գործչի հայրենանվեր գործունեությունը: Զ. Գևորգյանը ներկայացրել է Նիկոլ Դումանին որպես հայության գոյապայքարին զինվորագրված բազմաթիվ մարտիկների համար երկաթյա կամքով ու խորագիտությամբ օժտված հրամանատարի ու ուսուչի մարմնացում:

Զ. Գևորգյանը կարծես կանխազգում էր խորհրդային հզոր կայսրության փլուզումն ու անկախ պետությունների կազմավորումը և, հետևաբար, քաջ գիտակցելով Հայկական հարցի, անկախ Հայաստանի այլեկոծ ապագան, նա իր կարևոր լուման ներդրեց ազատագրական պայքարում, նախ որպես գիտնական, իսկ այնուհետև՝ անձամբ ձեռնարկեց Կոտայքի և Արագածոտնի մարզերի մի շարք համայնքների կամավորական խմբերի կազմավորումն ու ուղեկցումը դեպի Արցախ: Չափազանցած չենք լինի, եթե նշենք, որ Զ. Գևորգյանի գլխավորությամբ ձևավորված, վերջինիս գաղափարական բովով անցած կամավորներից շատերը հերոսացան: Պետրոս Ղևոնդյան (Պետո), Կարոտ Մկրտչյան, Հրաչ Մուրադյան... Ազատամարտիկներ, ովքեր արժանացան բազմաթիվ պարգևների, իսկ Պետոն արժանացավ Արցախի հերոսի բարձրագույն կոչման: Եվ ինչ էր մնում հայրենասեր պատմաբանին, եթե ոչ իր խոնարհ հերոս ընկերների հայրենասեր և նվիրական կերպարների մասին գրելը՝ ի հիշատակ ապագա սերունդների: Այդպես, օրինակ, 2000 թ. լույս տեսավ Զ. Գևորգյանի «Պետո» գիրքը՝ լրացնելով ազգային հերոսների վերաբերյալ անվանի պատմաբանի ուսումնասիրությունների շարքը:

Ընթերցող հանրության պահանջով վերջին տարիներին երկու անգամ՝ 2003 և 2009 թթ., լույս է տեսել Զ. Գևորգյանի «Սեբաստացի Մուրադ» աշխատությունը: Այնուհետև, 2011 թ. հրատարակվեց գիտնականի «Յապոն» աշխատությունը, որտեղ պատմաբանը ներկայացնում է մեկ այլ նվիրյալ հայորդու՝ Հովհաննես Պարոնյանի կյանքն ու գործունեությունը: Նույն 2011 թ. հայրենասեր պատմաբանը հրապարակել է մեկ այլ նշանավոր հայդուկի՝ Սեդրակ Չալայանի գործը և հուշերը: Ուշագրավ է հատկապես վերջինիս՝ որպես Բաշ-Ապարանի հերոսամարտի աշխարհագրի կազմակերպչի ներկայացումը:

2012 թ. լույս է տեսել օժտված պատմաբանի «Ազատագրական պայքարի ռազմավարությունը և էջեր նրա հերոսապատումից» աշխատությունը: Հայրենական պատմագրության մեջ դարձյալ առաջին անգամ ներկայացվում են 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի առավել կարևորագույն ու արմատական նշանակություն ունեցող իրադարձությունները, Արևմտյան Հայաստանում և Կովկասում մարտական-հայդուկային և զինակիր խմբերի հերոսամարտերը:

2018 թ. պրոֆեսոր Գևորգյանը լույս ընծայեց «Հայաստանի Հանրապետության կառավարության մարտավարությունը Սյունիքում և Արցախում 1918-1920 թթ.» ծավալուն աշխատությունը, որտեղ արխիվային հարուստ սկզբնաղբյուրների, ժամանակակից մամուլի նյութերի քննական վերլուծությամբ ներկայացվել է 1918-1920 թթ. Սյունիքի և Արցախի

հայրության ազատագրական պայքարն ընդդեմ Ադրբեջանի զավթողական քաղաքականության: Մանրամասնորեն ներկայացվում են Չորավար Անդրանիկի, Արսեն Շահմազյանի, Յապոնի, Սերգեյ Մելիք-Յուլյանի, Գարեգին Նժդեհի, Դրաստամատ Կանայանի մասնակցությունը Չանգեզուրի հերոսամարտին, Շուռնուխի հաղթական արշավանքը, Չանգեզուրի մարտական ուժերի մարտյան հերոսամարտը, Մամայի ճակատամարտը, Արցախի 6-րդ և 7-րդ համագումարների աշխատանքները:

Ընդհանուր առմամբ, Համլետ Գևորգյանը հեղինակ է 15 մենագրությունների և ավելի քան 100 գիտական հոդվածների:

Իր հայրենանվեր գործունեության համար Համլետ Գևորգյանը պարգևատրվել է «Շուշիի ազատագրման» և «Դրաստամատ Կանայան» մեդալներով:

Ցավոք, 2020 թ. հունիսի 4-ին Հ. Գևորգյանը անժամանակ հեռացավ կյանքից՝ չիրականացնելով բազում նախատեսված աշխատանքներ:

Պրոֆեսոր Համլետ Գևորգյանի տասնյակ աշխատությունները մնայուն հետք են թողել հայոց ազգային-ազատագրական պայքարի, ազգային-պետական գործիչների, Հայաստանի առաջին Հանրապետության, Արցախյան ազատամարտի պատմության ուսումնասիրության ոլորտում՝ ինչպես իրենց պատմագիտական արժեքով, այնպես էլ ռազմահայրենասիրական դաստիարակիչ նշանակությամբ:

Արթուր Ղազարյան – պ.գ.թ.